

Մեդիագրագիտություն. հավելած

Արմեն Սարգսյան

Watchdog

լրագրություն.

հանրային

շահերի

պահապան

շները





USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



ՄԵՂԻԱ
ՆԱԽԱՃԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

**Գրքույկները մշակել է Մեղիա նախաձեռնությունների կենտրոնը՝
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ)
Ֆինանսավորմամբ իրականացվող «Մեղիան քաղաքացիների տեղեկացված
մասնակցության համար» ծրագրի շրջանակներում:**

«Մեղիազարգիտություն. հավելված» գրքույկների շարքը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայրում մեղիազարգիտություն դասավանդողների համար է: Այն առաջարկվում է որպես լրացում «Մեղիազարգիտություն» ուսուցչի ձեռնարկի (Ինտերնյուս, 2013):

Գրքույկներից յուրաքանչյուրում ներկայացված է մեղիազարգիտության մի թեմա՝ ներառելով տեղեկություններ ու օրինակներ, վարժություններ ու մեթոդական ցուցումներ դասավանդողին:

Շարքում ներառված են հետյալ թեմատիկ գրքույկները

Գեղամ Վարդանյան
Լուրը,
լրագրություն
ու
հասարակությունը

Գեղամ Վարդանյան
#ElectricYerevan-ի
լուսաբանումը
արտասահմանյան
լրատվամիջոցներում

Լուսինե Գրիգորյան
Մեղիա
զարգիտության
հինգ հարցերը.
ինչպե՞ս
վերլուծել
տեղեկությունները

Լուսինե Գրիգորյան
Կասկածի,
համեմատի,
ճշտի.
ինչպե՞ս
բացահայտել
և ստուգել կեղծ
տեղեկությունները

Մսերոպ Զարությունյան
Լրագրողական
էթիկան
գործնականում.
մեղիայի ինքնա-
կարգավորման
մեխանիզմները

Արմեն Սարգսյան
Watchdog
լրագրություն.
հանրային
շահերի
պախապան
շները

Խմբագրական կազմ

Լուսինե Գրիգորյան
Նունե Սարգսյան
Անահիտ Էվոյան

Ձևավորումը՝ Արթուր Մաշինյան, Citystudio

Տպագրված է «Հայրապետ հրատարակչություն» ՍՊԸ տպարանում

© Մեղիա նախաձեռնությունների կենտրոն, 2019

ՊԱՅԱՊԱՆ ՇՈՒՆ. Բնորոշում, որով հպարտանում են լրագրողները

Կտանգներ զգալու, կասկածելի այցելուներ նկատելու դեպքում պահապան շները աղմուկ են բարձրացնում, փորձում են պաշտպանել իրենց վստահված տարածքը, իմաց են տալիս տերերին: Լրագրության գործառնություններից մեկը բացատրում են շների այս վարքի օրինակով. հանրությանը սպառնացող, վնասող տեղեկությունները հրապարակելով՝ լրագրողները բացահայտում են դավադրություններ, իրազեկում են համընդհանուր կեցության և անվտանգության վրա ազդող որոշումների մասին, հետաքրքրում են գաղտնի գործարքներ, ուշադրության են արժանացնում պաշտոնյաներին վերաբերող տեղեկություններ:

«Պահապան շուն» եզրույթը ամերիկյան է, բայց աշխարհում այսպես են բնութագրում այն լրագրողներին, ովքեր գերադասում են հանրային, հասարակական շահը պետականից և ազգային անվտանգությունից: Այս լրագրողներին, բացի պահապան շներից, կոչում են նաև «բարոյականության պահապաններ», «հանրության պահակներ», «հասարակության հսկիչներ» և այլն: Նրանց նաև քննադատում են, որ խոսքի ազատությունը վեր են դասում պետական գաղտնիքներից:



Պահապան շան «watchdog» եզրույթին հակառակ՝ գործածվում է նաև «lapdog»-ը, բառացի՝ «գոգի շուն» կամ «ծեռնասուն շուն»: Այս անունով հեգնում են այն լրագրողներին, ովքեր «նստած են իշխանության գոգին»: Այսինքն՝ նրանք սպասարկում են պետական պաշտոնյաներին և նրանց հետ սերտաճած խոշոր ծեռնարկատերերին:

«Հանրության պահակներն» իրենց գործում հինգ հիմնական հմտություններ են բանեցնում:

Փաստերի ստուգում

Հետևում են պաշտոնյաների, պետական, քաղաքական կամ հանրային գործիչների հայտարարություններին և գործունեությանը, դրանց վերաբերյալ փաստեր հավաքում, ճշտում, թե որքանով են այդ հայտարարությունները համապատասխանում իրականությանը:

Հատուկ հարցազրույցներ

Օգտագործելով իրենց մասնագիտական հմտությունները՝ փորձում են պատասխանատուներից պարզել, շատ հաճախ՝ կորզել տեղեկություններ և տվյալներ: Հարցազրույցի կարևոր ժանրը նրանք օգտագործում են խոստովանություններ, անկեղծ պատասխաններ կամ անակնկալ բացահայտումներ ստանալու համար:

Խորհրդապահական զրույցներ

Ստեղծում են վստահելի, ամուր կապեր տեղեկատվության աղբյուրների հետ և, դրանք չբացահայտելու պայմանով, գնում են նյութի հետքերով: Այս դեպքում տեղեկատվության աղբյուրները կարող են լինել ոչ միայն պաշտոնյաները, այլև նրանց գործունեությանը, շրջապատին ծանոթ մարդիկ, ովքեր կարող

են արժեքավոր տեղեկություններ տրամադրել, բայց ցանկանում են գաղտնի մնալ: Հաճախակի հանդիպումների շնորհիվ լրագրողը ձեռքը միշտ պահում է իրադարձությունների «զարկերակին»: Դրա համար ԱՄՆ-ում այն կոչում են նաև «զարկերակային լրագրություն» (beat journalism):

Լրագրողական հետաքննություն

Խորապես ուսումնասիրում են մեկ թեմա կամ դեպք, հավաքում անհրաժեշտ ապացույցներ, գտնում առնչվող մարդկանց, հերոսների, կատարում ծայնագրություններ, նկարահանումներ, նույնիսկ ձեռք են բերում իրեղեն ապացույցներ: Այսօրինակ հետաքննությունները կարող են տարիներ տևել, պահանջում են մեծ ջանքեր, միջոցներ, խիստ կարգապահություն և զգուշություն:

Աշխատանք «սուլիչ փչողների» հետ

«Սուլիչ փչողը» անգլերեն whistleblower եզրույթի բառացի թարգմանությունն է: Այսպես են անվանում այն մարդուն, ով, իրազեկ լինելով իր աշխատավայրի անօրինություններին կամ հանրությանը սպառնացող վտանգներին՝ գաղտնի համագործակցում է լրագրողի հետ, նյութեր ու տեղեկություններ է տրամադրում: Նրանք «ներսի» մարդիկ են և սովորաբար մեծ ռիսկի են դիմում՝ աշխատանքը, նույնիսկ կյանքը կորցնելու հեռանկարով: Այս մարդիկ կարող են լինել սպանությունների ականատեսներ, գործարքների վկաներ, կարող են ունենալ փաստաթղթեր և իրեղեն ապացույցներ:

Պատմության ամենացայտուն օրինակներից մեկը, որ բնութագրում է լրագրության watchdog գործառնությունը, Ուոթերգեյթի սկանդալն է:



Լուսանկար 1. Գաղտնի նկարահանում. ԱՄՆ Նախագահ Ռիչարդ Նիքսոնը և Նրա աշխատակազմի ղեկավար Բոբ Յալսեմանը տնօրինում են պետական կարևոր փաստաթղթերի ճակատագիրը:
Լուսանկարը՝ «Վաշինգտոն փոստի»


ԱՄՆ, ՈւՐԹԵՐԳԵՅԹ

«պահապան շներ» Վուվարդը և Բեռնսթայնը մաքրում են ԱՄՆ Սպիտակ տունը


1972 թվականին ԱՄՆ Նախագահ Ռիչարդ Նիքսոնը պատրաստվում էր իր վերընտրման քարոզարշավին: Նրա նախընտրական շտաբը դարձել էր երկրի ամենահզոր կառույցներից մեկը և ուներ հատուկ ստորաբաժանում, որը տեղավորվել էր մայրաքաղաք Վաշինգտոնի Ուոթերգեյթ կոչվող վարչական շենքերից մեկում (այն հիմա հյուրանոց է): Այստեղ անօրինական գործակալները պահում էին պետական փաստաթղթեր, գաղտնալսում էին բարձրաստիճան պաշտոնյաներին և ԱՄՆ կոնգրեսի անդամներին, իրականացնում էին ֆինանսական գործարքներ: Գաղտնալսումները ԱՄՆ Նախագահի գրասենյակից տեղափոխվում էին Ուոթերգեյթ և այնտեղ մշակվում:

«Վաշինգտոն փոստ» թերթի լրագրողներ Բոբ Վուվարդը և Կառլ Բեռնսթայնը այս մասին տեղեկություն

էին ստանում իրենց գաղտնի աղբյուրից, ում նրանք կոչում էին «խոր Կոկորդ»: Երկու լրագրողները իսկական պահապան շների նման հետևում էին իրադարձություններին, խոր Կոկորդի նշած կասկածելի պաշտոնյաներին: Լրագրողներն իրենց աղբյուրների հետ հանդիպում էին Ռուսլին թաղամասում գտնվող մի ավտոտնակում խիստ գաղտնի պայմաններում: Իրականում նրանք բացահայտում էին այն, ինչ պետությունը և հատուկ ծառայությունները փորձում էին թաքցնել:



Լուսանկար 2. Լրագրողներ Կառլ Բեռնսթայնը և Բոբ Վուդվարդը վարում են Ուոթերգեյթի հետաքննությունը:
Լուսանկարը՝ «Վաշինգտոն փոստի»



Լուսանկար 3. Լրագրողների ուրվագծած սխեման՝ «Ով ում հետ կապ ունի, և ով է ենթարկվում»

Լուսանկարը՝ «Վաշինգտոն փոստի»

Վուդվարդի և Բեռնսթայնի հրապարակումները գրավեցին ամերիկյան հասարակության ուշադրությունը: Լրագրողները, արդեն իսկ իմանալով որոշ գաղտնիքներ, գնում էին մամուլի ասուլիսների և պաշտոնյաներին «նեղը գցում» իրենց հարցերով: Օրինակ՝ նրանք Սպիտակ տան անվտանգության պատասխանատուներին հարցնում էին, թե արդյո՞ք

ձայնագրվում են Նախագահի հանդիպումները և զրույցները: Որտե՞ղ են պահվում պետական գաղտնիք պարունակող թղթերը, և ովքեր են դրանք տնօրինում:



Տեսանյութ 1. Ռիչարդ Նիքսոնը ԱՄՆ Կոնգրեսի լսումների և հարցաքննության ժամանակ փորձում է ապացուցել իր անմեղությունը: Այստեղ նա արտասանում է իր հայտնի խոսքը. «Մարդիկ պետք է իմանան՝ արդյոք իրենց Նախագահը խաբեբա է, թե ոչ: Ես խաբեբա չեմ (I am not a crook)»:
Հղումը՝ <https://youtu.be/sh163n1IJ4M?t=26>



Լուսանկար 4. Վերնագիրը՝ «Նիքսոնը հրաժարական տվեց»
Լուսանկարը՝ «Վաշինգտոն փոստի»

Մի քանի այլ հեղինակավոր լրագրեր, օրինակ՝ «Նյու Յորք Թայմսը», ևս սկսեցին հետաքննել Ուոթերգեյթը: Կասկածները գնալով ավելանում էին: 1972 թվականի հունիսի 17-ին, երբ փոխում էին Սպիտակ տանը գաղտնի տեղադրված ձայնագրող սարքը և ժապավենները, մի պահակ նկատեց զեղծարարներին և աղմուկ բարձրացրեց: Ոստիկանությունը, կարծելով, թե գողություն է կատարվում, ձերբակալեց այդ մարդկանց: Լուրը պայթեց լրատվամիջոցներում: Կասկածները, որոնք առաջացել էին լրագրողների հոդվածներից, սկսեցին հաստատվել: Պարզվեց, որ ձայնագրող սարքը փոխողները անօրինական աշխատող գործակալներն էին: Այսպես բացահայտվեց Ուոթերգեյթի ամբողջ ցանցը: Նախագահ Նիքսոնը սկզբում հրաժարվեց ընդունել, թե կապ է ունեցել այդ գաղտնալսումների հետ: (Տեսանյութի հղումը այստեղ՝ <https://youtu.be/sh163n1IJ4M?t=26>):

Սակայն լրագրողները, Կոնգրեսը, ինչպես նաև Ջե-տախուզության դաշնային բյուրոն ապացուցեցին Նրա կապը Ուոթերգեյթի հետ: Նախագահը, ճիշտ է, վերընտրվեց, բայց կարճ ժամանակ անց, փաստերի ճնշման տակ, հրաժարական տվեց: Հրաժարականի համար լուրջ պատճառ էր «Նախագահի բոլոր մարդիկ» խորագրով հոդվածների շարքը՝ «Վաշինգտոն փոստ» թերթում:

Լուսանկար 5. «Խորը կոկորդ»
Մարկ Ֆելթը՝ աղջկա հետ
Լուսանկարը՝ «Վաշինգտոն
փոստի»



«Վաշինգտոն փոստի» լրագրողներ Վուդվարդն ու Բեռնսթայնն ստացան ամենահեղինակավոր՝ Պուլիցերյան մրցանակը: Ավելի քան 40 պաշտոնյա դատապարտվեց ազատազրկման: Լրագրողները այդպես էլ չբացահայտեցին Ուոթերգեյթի իրենց տեղեկատվության աղբյուրին՝ Խոր Կոկորդին: Միայն 2005 թվականին, երբ Խոր Կոկորդը ինքը ցանկացավ դուրս գալ ստվերից, հասարակությունն իմացավ Նրա անունը՝ Մարկ Ֆելթ: Նա Ջետախուզության դաշնային բյուրոյի բարձրաստիճան աշխատակից էր և հանուն արդարության դեմ էր գնացել համակարգին ու տեղեկություններ տրամադրել լրագրողներին:

Ո՞րն էր Ուոթերգեյթի ազդեցությունը ամերիկյան հասարակության, և, որոշ իմաստով, համաշխարհային լրագրության վրա:

- ✓ **Յրաժարական տվեց արդեն ընտրված նախագահը, ով խոստովանեց իր սխալը:**
- ✓ **Պատասխանատվության ենթարկվեցին նրա տասնյակ մեթավորներ, ովքեր կապ էին ունեցել անօրինական և գաղտնի գործարքների հետ:**
- ✓ **Լրագրողները դարձան ավելի ինքնավստահ և համարձակ: Յետևեցին նոր բացահայտումներ:**
- ✓ **Բազմաթիվ գրքեր և ֆիլմեր ստեղծվեցին, որոնք ներկայացրին այդ սկանդալի և մեծ խարդախության բոլոր մանրամասները:**


ՀԱՅԱՍՏԱՆ, ԹՌԶԿԱՆ

հանրության պահապանները ջրվեժի համար անձնագիր են հանում

2010 թ. հունիսին Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղում ժողով էր: Ծինարարական մի կազմակերպություն մոտ տասը գյուղացիների ներկայացնում էր իր ծրագիրը՝ գյուղին մոտ գտնվող Թռչկանի ջրվեժի տարածքում հիդրոէլեկտրակայան (ՀԷԿ) կառուցել, աշխատատեղեր ստեղծել, կասեցնել արտագաղթը: 2011 թվականի սեպտեմբերի 18-ին հետաքննող լրագրողների Hetq.am պարբերականը գրում է.

«Այս լուրը իմանալուց հետո մի խումբ գյուղացիներ, ովքեր անտարբեր չեն իրենց գյուղի, իրենց երեխաների և իրենց ճակատագրով, համախմբվում են, ստորագրահավաք են կազմակերպում և մոտ 100 հոգու անունից 2010 թ. հուլիսին նամակ են գրում բնապահ-

պանության նախարարին և վարչապետին: Մի քանի օրից 2 հոգի գալիս են բնապահպանության նախարարությունից, գնում են իբր ջրվեժի տարածքը ուսումնասիրելու: Եվ շատ շուտով սկսվում են ՀԷԿ-ի շինարարության աշխատանքները՝ առանց որևիցե բացատրություն տալու գյուղացիներին»: (Լուսանկարի հղումը այստեղ. <https://hetq.am/hy/article/4800>):



Լուսանկար 6. Մեծ Պարսիի գյուղացիների նամակը Լուսանկարը՝ «Հետք» պարբերականի

2011 թվականի սեպտեմբերից հայաստանյան լրատվամիջոցներում հայտնվեցին բնությանը սպառնացող վտանգի մասին լուրեր: Չնայած ՀԷԿ կառուցող ընկերությունը հավաստիացնում էր, որ շինարարությունը ոչ մի բացասական ազդեցություն չի ունենալու ո՛չ շրջակա միջավայրի վրա, և ո՛չ էլ, առավել ևս, Թռչկան ջրվեժի վրա, լրագրողներն իրենք են այցելում «դեպքի» վայր, ճշտում խնդիրը մասնագետներից և տեղացիներից, բարձրաձայնում հարցը:

Թռչկանի ջրվեժը գտնվում է Ծիրակի և Լոռու մարզերի սահմանին՝ Փամբակ գետը թափվող Զիգխան վտակի վրա: Թռչկանը Հայաստանի գահավիժող ջրվեժներից ամենաբարձրն է՝ 22 մետր: 2008 թվականից Թռչկանն ընդգրկված էր ՀՀ բնության հուշարձանների ցանկում՝ որպես գեղագիտական առանձնահատուկ արժեք ունեցող ջրագրական հուշարձան: Այսինքն՝ ջրվեժը պահպանվում էր օրենքով: (Տեսանյութի հղումը՝ այստեղ. <https://youtu.be/QZQbsrnnVVK>):



Տեսանյութ 2. Թռչկանի ջրվեժի հմայքները
 Հղումը՝ <https://www.youtube.be/QZQbsmnVVK>

2011 թվականին շրջակա բնակիչները ահազանգեցին, որ տարածքում արդեն տեխնիկա է աշխատում և ավերածություններ է գործում: Ինչպե՞ս կարող էր օրենքով պահպանվող տարածքում շինարարություն սկսվել: Բնապահպանները և լրագրողներն սկսեցին բացահայտել Թռչկանի շուրջ հյուսված մի ամբողջ գործարք:

Բնապահպան կազմակերպություններն իրենց վրա վերցրին «ներսի մարդու» գործը. արագորեն հանրությանը ներկայացվեցին Հայաստանի համապատասխան օրենսդրությունը, ՀԷԿ-ի շինարարության թույլտվությունը ստացած «Ռոբշին» ՍՊԸ-ի տեխնիկական հիմնավորումները, տեղանքի բնապահպանական վերլուծության ծավալուն փաստաթղթերը: Դրանք, ճիշտ է, փակի տակ չէին, ձեռք չէին բերվել գաղտնի ճանապարհներով, բայց ուսումնասիրման համար ժամանակ, հմտություն և ջանքեր էին պահանջում: Այդպես, մի քանի լրատվամիջոցներ «մասնագիտացան» Թռչկանի հարցում: Վերնագրերից և

լուսաբանման հաճախականությունից արդեն պարզ էր դառնում, որ հայկական մեդիան, Թռչկանի պահապաններին հետևելով, ստանձնել էր «պահապան շան» դերը:

Բնապահպանները բողոքի ակցիաներ էին կազմակերպում հենց Թռչկանի տարածքում, Լոռու և Շիրակի մարզերում, մայրաքաղաքում, «պաշարում էին» կառավարության շենքը: Իրենց հերթին էլ՝ լրագրողները «գրոհում էին» պատասխանատու պաշտոնյա-

Լուսանկար 7.
Բնապահպանների բողոքը. «Թռչկանը ՅԷԿ չի դառնալու»
Լուսանկարը՝
«Արմենիանաու»
պարբերականի



ների վրա: Թեև բնապահպանության նախարարն ասել էր, որ ՅԷԿ-ը կշահագործվի գարնան վարար ամիսներին, իսկ ամռանը սեփականատերը ձեռք չի տա ջրվեժին, սակայն բնապահպանները չէին դադարում բողոքել:

Թռչկանի ջրվեժի տարածքը ճիշտ մեկ հեկտար է: Այս մեկ հեկտարի շուրջ կրքերը բորբոքվեցին այն աստիճան, որ բնապահպաններն սկսեցին իրազեկման արշավներ իրականացնել, նստացույցեր կազմակերպել, հանրահավաքներ անել: Ասուլիսներ էին տալիս թե՛ բնապահպանության նախարարությունը, թե՛ ՅԷԿ-ի կառուցմանը դեմ կազմակերպությունները: Հայաստանյան www.1in.am լրատվամիջոցը ավելի քան 45 հոդված գրեց, «Հետքը»՝ շուրջ 20 հետա-

քննությունն արեց, Iragir.am-ը՝ 10 հոդված, A1+, Civilnet առցանց լրատվամիջոցները նույնիսկ ուղիղ եթերում



Տեսանյութ 3. ՀՀ վարչապետը կառավարության նիստում հայտարարում է Թռչկանի հարցով որոշման մասին
Հղումը՝ <https://www.youtube.com/watch?v=Dq5S2urVzn8?t=12>

հեռարձակեցին իրադարձությունները: 2011 թվականի նոյեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարության նիստում վարչապետը, անդրադառնալով Թռչկանի խնդրին, հանձնարարեց ջրվեժը հատուկ պահպանվող տարածք դարձնել:


(Տեսանյութի հղումը՝ այստեղ.

<https://youtu.be/Dq5S2urVzn8?t=12>):

Սա Թռչկանի թնջուկի հանգուցալուծումն էր: «Ռոբ-շին» ՍՊԸ-ն հայտարարեց, որ դադարեցնում է Թռչկանի ջրվեժի տարածքում՝ Չիչխան գետի վրա կառուցվող հիդրոէլեկտրակայանի շինարարությունը և տեխնիկան դուրս է բերում տարածքից: Պատմության վերջը, իհարկե, «Հետքի» տարածած այն լուրն էր, որ «Թռչկան ջրվեժ» բնության հուշարձանի անձնագրի նախագիծն արդեն մշակվել է նախարարության կողմից: Ահա այդ մեկ հեկտարի քարտեզը, որը «հանրության պահակների» հսկողության տակ էր հայտնվել:

Փաստաթղթի հղումը՝ այստեղ.

<http://hetq.am/static/content/pdf/trchkan.pdf>



Լուսանկար 8. Թռչկանի՝ բնության հուշարձանի
անձնագիրը

Փաստաթուղթը՝ «Յետք» պարբերականի

Աղբյուրներ

www.wikipedia.org

www.washingtonpost.com

www.ecolur.org

www.econews.am

www.hetq.am

www.1in.am

www.aravot.am

www.a1plus.am

www.armenianow.com

www.organize-now.am

Առաջադրանք

Պատմությունը լրագրողների քայլերին համադրելով՝ նշեք հետևյալ դերերն ու գործառույթները.

- ✓ Ո՞ր վ էր Ուոթերգեյթի «սուլիչ փչողը»:
- ✓ Ինչպե՞ս էին հատուկ հարցազրույցներ անցկացնում Բեռնսթայնն ու Վուդվարդը:
- ✓ Ովքե՞ր էին Թռչկանի «սուլիչ փչողները»:
- ✓ Ի՞նչ իրադարձություններ էին օգտագործում լրագրողները՝ Թռչկանի հարցով պատասխանատուներին հարցեր տալու համար:

Ո՞րն էր Թռչկանի լուսաբանման ազդեցությունը հայաստանյան հասարակության վրա:

- ✓ Հստակ որոշում կայացվեց Թռչկանի տարածքում շինարարությունը դադարեցնելու մասին:
- ✓ Հայկական առցանց լրատվամիջոցները ցուցաբերեցին հետևողականություն և «գնացին» մի խումբ բնակիչների նամակի հետքերով մինչև վերջ:
- ✓ Համագործակցեցին բնապահպան ակտիվիստները և լրագրողները:
- ✓ Թռչկանի լայն լուսաբանումը ցույց տվեց, որ ուժերը համախմբելու դեպքում կարելի է հասնել հանրության համար կարևոր հարցերի վերջնական լուծմանը:

Օգտագործված նյութեր և օգտակար հղումներ

«Վաշինգտոն փոստ» թերթի՝ Ուոթերգեյթին վերաբերող բաժինը՝ տեսանյութերով, լուսանկարներով.

<https://www.washingtonpost.com/politics/watergate/>

«Թռչկան» քաղաքացիական նախաձեռնության կայքը, ուր կան փաստաթղթեր և հարակից թեմաներով հոդվածներ

<http://trchkan.blogspot.com/>

Թռչկանի ջրվեժի մոտ «ավերիչ» շինարարությունը եռում է

<http://ecolur.org/hy/news/sos/vdestructive-civil-works-at-full-capacity-near-trchkan-waterfall/2933/>

Ստել և փորձել են հիմարացնել Մեծ Պարնիի բնակիչներին

<https://hetq.am/hy/article/4800>

Երբ պաշտոնյան դառնում է բնական աղետ

<https://hetq.am/hy/article/6147>

ՖԻԼՄԵՐ

Նախագահի բոլոր մարդիկ

(All the President's Men), 1976: Ռեժիսոր՝ Ալեն Պակուլա

Ամենազոր Էյվանը

(Evan Almighty), 2007: Ռեժիսոր՝ Թոմ Շադյակ

Այս կատակերգությունը լրագրողի մասին պատմող «Ամենազոր Բրյուսը» ֆիլմի երկրորդ մասն է, որը պատմում է Էյվանի մասին, ում վիճակված է փրկել բնությունն ու երկիրը:

Նշումների համար



Մեդիագրագիտություն. հավելված

Արմեն Սարգսյան
Watchdog
լրագրություն.
հանրային
շահերի
պահապան
շները

